«Հաստատված է»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի «04».12.2020թ. թիվ 9 նիստում
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-մայոր

Մ.ԲԱԲԱՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է ամբիոնի (կրթաճյուղի) պրոֆեսորադասախոսական անձնակազմի (այսուհետ՝ ՊԴԱ) մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման նպատակը, խնդիրները, վարկանիշային գնահատականի ձևավորման սկզբունքները, գնահատման գործընթացի կազմակերպումը և իրականացումը:

II. Վարկանիշային գնահատման նպատակը, խնդիրները

2. Ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի գործունեության որակի վարկանշային գնահատման հիմնական նպատակը մասնագիտական որակին համապատասխան ուսումնական, գիտական և մանկավարժական աշխատանքի և հանրային ծառայության արդյունավետության, դրա աճի արձանագրումն ու խթանումն է, ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպչական, գիտական, հետազոտական և հանրային գործունեության արդյունավետության գնահատումը՝ նրանց աշխատանքային գործունեության որոշակի ժամանակահատվածի կտրվածքով, որն ուղղված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) զարգացմանը և դրա գործունեության արդյունավետության և որակի բարձացմանը:

3. Վարկանիշային գործունեության գնահատման արդյունքները, որպես տեղեկատվական պաշար հանդիսանում են Կրթահամալիրի ղեկավարման կատարելագործման կարևոր գործիք:

4. Վարկանիշային գնահատման հիմնական խնդիրներն են.

1) ձևավորել ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի աշխատանքի արդյունավետության գնահատման համալիր չափանիշներ,

2**)** ստեղծել ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի աշխատանքները գնահատելու համար ընդհանրական գնահատման համակարգ,

3) խրախուսել ներկրթահամալիրային գիտակրթական և հասարակական գործունեությունը,

4) խթանել մասնագիտական և գործնական որակների շարունակական կատարելագործմանը, ուսումնակազմակերպչական գործունեության ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը,

5) նպաստել գիտահետազոտական, գիտակազմակերպչական և գիտամանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացմանը,

6) վերլուծել սովորողների հավաքական կարծիքը դասավանդման, ուսումնառության որակի և դրա արդյունավետության վերաբերյալ,

7) որոշել ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի աշխատանքային գործունեության արդյունավետության վարկանիշային ցուցիչները և ընդունել դրանք որպես հիմք՝ նրանց գնահատման, ՊԴԱ-ի մրցութային ընտրության, պաշտոնեական առաջընթացի, խրախուսման և պատասխանատվության միջոցների կիրառման դեպքերում:

III. Վարկանիշային գնահատականի ձևավորման սկզբունքները

5. Վարկանիշային գնահատականի ձևավորման սկզբունքներն են՝

1) գնահատման բովանդակության համապատասխանությունը Կրթահամալիրի զարգացման գերակայություններին,

2) ստացված տեղեկատվության օբյեկտիվությունը և հավաստիությունը,

3)գնահատման թափանցիկությունը, օպերատիվությունը և համակարգվածությունը,

4) գնահատման տարբեր ձևերի համատեղումը,

5) գնահատողների իրավասությունը և օբյեկտիվությունը,

6)վարկանիշային գնահատման արդյունքներով՝ համապատասխան խրախուսման և պատասխանատվության ապահովումը:

6. Ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի վարկանիշային գնահատման սույն համակարգի գործընթացների իրականացման արդյունքում ձևավորվում են վարկանիշային գնահատականի հետևյալ հիմնական բաղադրամասերը.

1) Կրթահամալիրի ամբիոնի (կրթաճյուղի) համար՝

ա. սահմանված ժամանակահատվածում ամբիոնի (կրթաճյուղի) գործունեության արդյունավետության գնահատական՝ ամբիոնի (կրթաճյուղի) դասախոսների վարկանիշի հիման վրա,

բ. սահմանված ժամանակահատվածում սովորողների կողմից ամբիոնի (կրթաճյուղի) կողմից դասավանդվող առարկաների դասավանդման ու ուսումնառության որակին, նրա կրթական ծառայություններին տրված գնահատականի հիման վրա,

գ. Կրթահամալիրի համապատասխան ստորաբաժանումների (ուսումնամեթոդական և զարգացման վարչություն, գիտական աշխատանքների բաժին, կրթության որակի ապահովման բաժանմունք) կողմից ամբիոնին (կրթաճյուղի) տրված գնահատականի հիման վրա:

2) ՊԴԱ- ի համար՝

ա. սահմանված ժամանակահատվածում դասախոսների գործունեության արդյունավետության գնահատականի հիման վրա,
բ. սովորողների կողմից դասախոսներին և նրանց դասավանդման որակին տրված գնահատականի հիման վրա,
գ. ամբիոնի (կրթաճյուղի) կողմից դասախոսներին տրված գործընկերային գնահատականի հիման վրա:

7. Ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի գործունեության գնահատման ձևավորման համար կիրառվում է հատուկ ձևաթերթ, որը պարունակում է տվյալներ ամբիոնի, (կրթաճյուղի) ՊԴԱ-ի գործունեության վերաբերյալ ըստ հետևյալ բաղադրիչների.

1) որակական ցուցիչ,
2) ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական տարեկան աշխատանք,
3) գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական տարեկան աշխատանք,
4) աշխատանք սովորողների հետ, ներկրթահամալիրային և հանրային ծառայություններ (տարեկան աշխատանք),
5) գործընկերային և ուսանողական համակազմի գնահատում (տարեկան աշխատանք):

8. Ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման ձևավորման համար կիրառվում է հատուկ ձևաթերթ (Հավելված 1): Յուրաքանչյուր բաղադրիչ ներառում է գնահատման որոշակի ցուցիչներ՝ համապատասխան գործակիցներով, որոնց միջոցով հաշվարկվում է ընդհանուր վարկանիշային գնահատականը տվյալ բաղադրիչի համար:

9. Ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության գնահատման համար հիմք են ծառայում սովորողների կողմից տրվող՝ դասախոսը և առարկան սովորողի աչքերով (Հավելված 2), սովորողների՝ կրթական ծառայություններից բավարարվածության բացահայտման (Հավելված 3) հարցաթերթերը, որոնց լրացման արդյունքների մշակման հիման վրա հաշվարկվում է ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման էլեկտրոնային տեսքով 5-րդ բաղադրիչը:

10. Ամբիոնի (կրթաճյուղի) գնահատման 5-րդ բաղադրիչի ձևավորմանն է ուղղված նաև համապատասխան ստորաբաժանումների կողմից ամբիոնին (կրթաճյուղին) տրված գնահատականը: Կրթահամալիրի դասախոսի գնահատման 5-րդ բաղադրիչի ձևավորմանն է ուղղված նաև ամբիոնի (կրթաճյուղի) պետի կողմից՝ գործընկերային գնահատման և դասալսումների արդյունքների հիման վրա տրված գնահատականը:

11. ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության վարկանիշային արդյունարար միավորը (գնահատականը) ձևավորվում է վերոնշյալ հինգ բաղադրիչների արդյունքներից:

IV. Գնահատման գործընթացի կազմակերպումը

12. ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա հունիսի 20-ից մինչև հուլիսի 30-ը ընկած ժամանակահատվածում:

13. Գնահատման արդյունքներն ամփոփվում են մինչև հոկտեմբերի 30-ը՝ ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության վերաբերյալ ձևավորված արդյունարար վարկանիշային միավորների տեսքով:

14. Վարկանիշային գնահատման բոլոր բաղադրիչների ձևավորումն իրականացվում է համապատասխան հավաստող փաստաթղթերի հիման վրա:

15. Վարկանիշային տարեկան գնահատումը պարտադիր է Կրթահամալիրի բոլոր ամբիոնների (կրթաճյուղերի) և ՊԴԱ-ի համար:

16. ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման արդյունքներն ամփոփվում և դասակարգվում են թե՛ ըստ դասախոսական առանձին տարակարգերի, թե՛ ըստ առանձին ամբիոնների (կրթաճյուղերի):

17. Վարկանիշային գնահատման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ բաղադրիչների ձևաթերթային տվյալները, ներառյալ 5-րդ բաղադրիչի ամբիոնային և գործընկերային գնահատումների արդյունարար գնահատականը էլեկտրոնային ձևաչափ (առկայության դեպքում համակարգում) են ներմուծվում դասախոսի հիմնական ուսումնական բեռնվածությունն ապահովող ամբիոնի կողմից՝ դասախոսի հետ միասին:

18. Սահմանված կարգով, վարկանիշային գնահատմանն առնչվող տվյալները էլեկտրոնային եղանակով (առկայության դեպքում համակարգում) մուտքագրվելուց հետո ենթակա չեն փոփոխման:

19. Ամբիոնի (կրթաճյուղի) դասախոսի վարկանիշային գնահատման գործընթացների ընդհանուր համակարգումն իրականացնում է Կրթահամալիրի որակի ապահովման բաժանմունքը:

20. Կրթահամալիրի որակի ապահովման բաժանմունքը՝

1) համակարգում է տվյալների հավաքագրման գործընթացը,
2) իրականացնում է գնահատման արդյունքների ամփոփման և հավաքական ձևավորման գործընթացը և ներկայացնում է Կրթահամալիրի պետին:

21. Դասախոսների վերաբերյալ սովորողների հարցումների կազմակերպման համար պատասխանատու է Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչությունը:

22. Ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման արդյունքները կարող են կիրառվել հետևյալ նպատակներով.

1) Կրթահամալիրի տվյալների բազայի ստեղծման և գործունեության ղեկավարման կատարելագործման,
2) ամբիոնի (կրթաճյուղի) և ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության արդյունավետության պարբերական ինքնագնահատման և դրա հիման վրա մասնագիտական, ուսումնամեթոդական, մանկավարժական և գիտահետազոտական կարողությունների ու հմտությունների հետագա բարելավմանն ուղղված եզրակացությունների, երաշխավորությունների ձևավորման,

3) Կրթահամալիրում ՊԴԱ-ի խրախուսման տարբեր ձևերի կիրառման և տարբերակված հավելավճարային համակարգի ներմուծման, այդ թվում՝ պատասխանատվության միջոցների կիրառման,

4) ամբիոնի (կրթաճյուղի) դասախոսների գործունեության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության շարունակական մեծացման և դրանով իսկ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար:

23. Ամբիոնի (կրթաճյուղի) ՊԴԱ-ի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման արդյունքները ներքին օգտագործման համար են:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

N	ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑԻՉ	ՄԻԱՎՈՐ	Քանակ	Վարկանիշ
Ձեռք բերած որակավորման ցուցանիշներ				
1.	ԳԱԱ-ի ակադեմիկոս	6		
2.	ԳԱԱ-ի թղթակից -անդամ	5,5		
3.	Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր	5		
4.	Գիտությունների դոկտոր, դոցենտ	4,5		
5.	Գիտությունների թեկնածու, պրոֆեսոր	4		
6.	Գիտությունների թեկնածու, դոցենտ	3,5		
7.	Գիտությունների թեկնածու	3		
8.	Պրոֆեսոր, դոցենտ առանց գիտական աստիճանի	2,5		
9.	Ուսումնական ասիստենտ/դասախոս գիտական աստիճանով	2		
10.	Ուսումնական ասիստենտ առանց գիտական աստիճանի	1,5		
11.	Դասախոս առանց գիտական աստիճանի	1		
12.	ՀՀ / Գերատեսչական շքանշաններ, մեդալներ, պարգևներ, մրցանակներ	2		
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ				
1) Ուսումնական աշխատանք				
1.	Մասնակցություն կրթական բարեփոխումների գործընթացին	2		
2.	Ղեկավարած մագիստրոսական թեզերի քանակը	2		
2) Մեթոդական աշխատանք				
3.	Դասագրքեր			
3.1.	Հրատարակված արտասահմանում	2		
3.2.	Երաշխավորված հրատարակման ՀՀ ԿԳՍՄՆ-ի կողմից	2		
3.3.	Երաշխավորված հրատարակման Կրթահամալիրի կողմից	2		
4.	Ուսումնական ձեռնարկներ			
4.1.	ՀՀ ԿԳՍՄՆ-ի երաշխավորությամբ	2		
4.2.	Կրթահամալիրի երաշխավորությամբ	2		
4.3.	Այլ ուսումնական հաստատության կողմից երաշխավորությամբ	2		
5.	Հրապարակած էլեկտրոնային դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ	2		
3) Կազմակերպչական աշխատանք				

6.	Մշակումների մասնակցություն	1		
6.1.	Մասնագիտական կրթական ծրագրեր (քանակ)	1		
6.2.	Տիպային և աշխատանքային ուսումնական պլաններ (քանակ)	1		
6.3.	Առարկայական նկարագրեր (քանակ)	1		
6.4.	Ուսումնամեթոդական փաթեթներ և դասընթացի թղթապանակ (քանակ)	1		
7.	Մասնակցություն դասավանդման բարելավմանը միտված գիտաժողովներին և աշխատաժողովներին /որակավորման բարձրացում/	1		
ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ				
Հետազոտական աշխատանք				
1.	Մենագրություններ	4		
2.	Հոդվածներ			
2.1.	Արտասահմանյան ազդեցության գործակցով /ցիտվող/ հանդեսներում	3		
2.2.	ԲՈԿ-ի կողմից հաստատված հանրապետական առաջատար հանդեսներում /մամուլ/	1,5		
2.3.	Գիտաժողովների կամ սեմինարների նյութերի ժողովածուներում	1		
2.4.	Այլ գրախոսվող հանդեսում	1		
3.	Թեզիսներ	1		
3.1.	Միջազգային գիտաժողովներում	2		
3.2.	Հանրապետական գիտաժողովներում	1		
3.3.	Կրթահամալիրի գիտաժողովներում	1		
4.	Ղեկավարած և պաշտպանված գիտական աշխատանքների /ատենախոսություն/ թիվ	1,5		
Գիտակազմակերպչական աշխատանք				
5.	Մասնագիտական խորհուրդ			
5.1	Նախագահ	3		
5.2.	Անդամ	1		
6.	Գիտահետազոտական նախագծերի և դրամաշնորհային ծրագրեր			
6.1.	Ղեկավար	2		
6.2.	Անդամ	1		
7.	Գիտաժողովներ,կոնֆերանսների, սիմպոզիումների			
7.1.	Կազմկոմիտեի նախագահ	2		

7.2.	Կազմկոմիտեի անդամ	1		
8.	Գիտական ամսագրեր և ժողովածուներ			
8.1.	Խմբագրական կոլեգիայի ղեկավար	2		
8.2.	Խմբագրական կոլեգիայի անդամ	1		

ՆԵՐԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1.	Աշխատանք Կրթահամալիրում			
1.1.	Գիտական խորհրդում	2		
1.2	Գիտխորհրդի մշտական հանձնաժողովում	1		
1.3.	Ֆակուլտետի խորհրդում	1		
1.4.	Կրթահամալիրի, ֆակուլտետի ժամանակավոր հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում (յուրաքանչյուր 10 ժամի համար)	1		
2.	Հանրության շրջանում Կրթահամալիրի հեղինակության բարձրացմանն ուղղված գործունեություն			
2.1.	Ելույթներ ՌՀ-ում	1		
2.2.	Հոդվածներ ԶԼՄ-ներում	1		
2.3.	Միջոցառումներ	1		
ԱՇԽԱՏԱՆՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ				
4.	Ուսանողական գիտական ընկերությունների, խմբակների ղեկավարում	2		
5.	Ուսանողական զեկույցների ղեկավարում			
5.1.	Միջազգային կոնֆերանսների	2		
5.2.	Հանրապետական կոնֆերանսների	1		
6.	Սովորող-դասախոս հրապարակած հոդվածների քանակը	1		
7.	Ձեր ղեկավարությամբ մասնակցած/ մրցանակների արժանացած սովորողների քանակը			
7.1.	Միջազգային օլիմպիադաների, մրցույթների և այլն	2		
7.2.	Հանրապետական օլիմպիադաների, մրցույթների և այլն	1		
7.3.	Կրթահամալիրի օլիմպիադաների, մրցույթների և այլն	1		

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԴԱՍԱԽՈՍԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՁՔԵՐՈՎ /ՆՄՈՒՇ/

Սույն հետազոտությունն իրականացվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքի կողմից և նպատակ է հետապնդում բացահայտել դասախոսի աշխատանքի արդյունավետությունը և սովորողի գոհունակությունը տվյալ դասախոսից՝ բարեփոխումների համար հիմք հանդիսանալու նպատակով:

Ակնկալվում է Ձեր անկեղծ մասնակցությունը և օժանդակությունն այս գործընթացին: Հիշեցնենք, որ հարցումն անանուն է և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու և մեզ աջակցելու համար:

Հարցերին պատասխանել՝ գնահատելով 1-5 միավորային սանդղակով:

1=նվազագույն միավոր, 5= առավելագույն միավոր

Սեռ

- Արական
- Իգական

Տարիք

- 18-20
- 21-24
- 25-30
- 30 և ավել

Նշեք, թե որտե՞ղ եք սովորում

- Քոլեջի միջին մասնագիտական կրթության ֆակուլտետ 1-ին կուրս, 1-ին դասակ
- Քոլեջի միջին մասնագիտական կրթության ֆակուլտետ 1-ին կուրս, 2-րդ դասակ
- Քոլեջի միջին մասնագիտական կրթության ֆակուլտետ 2-րդ կուրս, 1-ին դասակ
- Քոլեջի միջին մասնագիտական կրթության ֆակուլտետ 2-րդ կուրս, 2-րդ դասակ
- Քոլեջի միջին մասնագիտական կրթության ֆակուլտետ 2-րդ կուրս, 3-րդ դասակ
- Ակադեմիա, Իրավագիտության ֆակուլտետ 1-ին կուրս,
- Ակադեմիա, Իրավագիտության ֆակուլտետ 2-րդ կուրս,
- Ակադեմիա, Իրավագիտության ֆակուլտետ 3-րդ կուրս,
- Ակադեմիա, Իրավագիտության ֆակուլտետ 4-րդ կուրս,
- Ակադեմիա, Մագիստրատուրա 1-ին կուրս

- Ակադեմիա , Մագիստրատուրա 2-րդ կուրս

Հարցաշար:

Հարցերին պատասխանել ՝ գնահատելով 1-5 միավորային սանդղակով:

1=նվազագույն արժեք 5= առավելագույն արժեք

1. Գնահատե՛ք դասախոսի կողմից սովորողների՝ առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու ընդունակությունը:

2. Ձեր տեսանկյունից գնահատեք դասախոսի կողմից մատուցվող նյութի բովանդակությունը:

3. Գնահատե՛ք դասախոսության ընթացքում դասախոսի կողմից ցուցաբերված հաղորդակցման կարողությունները՝ դասը հնարավորինս ինտերակտիվ կազմակերպելու գործում:

4. Գնահատե՛ք դասախոսի հետևողականությունն իր կողմից տրված հանձնարարականների ստուգման հարցում:

5. Գնահատե՛ք վերոնշյալ դասախոսի կողմից՝ ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը:

6. Ձեր տեսանկյունից որքա՞ն կկազմի տվյալ դասախոսի մասնագիտական գործունեության վարկանիշային միավորը կիսամյակի ավարտին: (Ուշադի՛ր նշեք, որ այս միավորը հանդիսանալու է Կրթահամալիրի դասախոսների մասնագիտական գործունեության վարկանիշավորման բաղադրիչ տարր):

Վարկանիշային գնահատման նպատակը. 6.1. Կրթահամալիրի ՊԴԱ-ի գործունեության որակի վարկանշային գնահատման հիմնական նպատակը մասնագիտական որակին համապատասխան ուսումնական, գիտական և մանկավարժական աշխատանքի և հանրային ծառայության արդյունավետության, դրա աճի արձանագրումն ու խթանումն է, ֆակուլտետի, ամբիոնի և դասախոսների ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպչական, գիտական,հետազոտական և հանրային գործունեության արդյունավետության գնահատումը՝ նրանց աշխատանքային գործունեության որոշակի ժամանակահատվածի կտրվածքով, որն ուղղված է Կրթահամալիրի զարգացմանը և դրա գործունեության արդյունավետության և որակի բարձրացմանը: Վարկանիշի արդյունքները հանդիսանում են տեղեկատվական պաշար, Կրթահամալիրի գործունեության և ղեկավարման կատարելագործման կարևոր գործիք:

7. Անհրաժեշտության դեպքում նշեք դասախոսի վերաբերյալ Ձեր առանձնակի կարծիքը:

_____

_____

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ՝ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹ /ՆՄՈՒՇ/

Բարև Ձեզ, մենք ներկայացնում ենք Կրթահամալիրի որակի ապահովման բաժանմունքը, որն իրականացնում է հետազոտություն՝ կրթական ոլորտում բարեփոխումների իրականացման նպատակով: Ձեր մասնակցությունը և անկեղծ պատասխանները մեզ համար շատ կարևոր են: Հարցումն անանուն է և տվյալները ներկայացվելու են ընդհանրացված տարբերակով: Շնորհակալություն մասնակցության համար:

1.Սեռ

1) Իգական 2) Արական

2.Տարիք

1) 18-20 2) 21-23 3) 23-25 4) 25 և ավելի

3. Նշեք Ձեր ֆակուլտետը և մասնագիտությունը

_____

4.Կուրս_____

5.Մասնագիտական կրթական ծրագիրը բավարարու՞մ է Ձեր մասնագիտական կարիքներին:

1) այո 2/ մասամբ այո 3) ոչ 4) մասամբ ոչ 5) դժվարանում եմ պատասխանել

6. Դասավորել ուսումնառության ընթացքում Ձեր անցած առարկաներն ըստ կարևորության՝ Ձեր մասնագիտական կայացման տեսանկյունից:

1)_____
2)_____
3)_____
4)_____
5)_____
6)_____
7)_____
8)_____
9)_____

7.Առարկայական ծրագրով նախատեսված ժամաքանակը բավարարու՞մ է արդյոք առարկան յուրացնելու համար:

1) այո 2) մասամբ այո 3) ոչ, 4) մասամբ ոչ 5) դժվարանում եմ պատասխանել

8.Առարկայական ծրագրում ներառված տեսական և գործնական պարապունքների բաշխվածությունը բավարարու՞մ է առարկայի արդյունավետ յուրացմանը:
1)այո (անցում 9-րդ հարցին) 2) ոչ

9.Ինչու՞:

_____

_____

10.Առարկայական ծրագրի շրջանակներում ներառված նյութերը (սկզբնաղբյուրներ, դասախոսություններ) բավարարու՞մ են ծրագրի յուրացման համար:

1) այո 2) մասամբ այո 3) ոչ 4) մասամբ ոչ 5) դժվարանում եմ պատասխանել

11.Նպատակահարմա՞ր եք համարում արդյոք առարկայական ծրագրում ներառված գործնական և տեսական պարապմունքների բաշխվածությունը:

1)) այո 2) մասամբ այո 3) ոչ 4) մասամբ ոչ 5) դժվարանում եմ պատասխանել

12.Տեղեկացվա՞ծ եք լինում առարկայական ծրագրի շրջանակներում ներկայացված ելքային վերջնարդյունքների մասին:

1) այո, բոլոր առարկաների դեպքում 2) երբեմն, որոշ առարկաների դեպքում 3) ոչ, ոչ մի առարկայի դեպքում 4)այլ պատասխան _____

13.Մասնագիտական կրթական ծրագրում դասընթացների հաջորդականությունը նպատակահարմա՞ր է:

14.Մասնագիտական կրթական ծրագիրը հագեցվա՞ծ է մասնագիտական դասընթացներով:

1) այո 2) մասամբ այո 3) ոչ 4) մասամբ ոչ 5) դժվարանում եմ պատասխանել

15. Մասնագիտական կրթական ծրագիրը հագեցվա՞ծ է ոչ մասնագիտական դասընթացներով: 1) այո 2) մասամբ այո 3) ոչ 4) մասամբ ոչ 5) դժվարանում եմ պատասխանել

16.Գնահատեք մասնագիտական կրթական ծրագրի բարդությունը:
1) շատ բարդ 2) ավելի շուտ բարդ, քան պարզ 3) բարդ 4) պարզ 5) ավելի շուտ պարզ, քան բարդ 6) շատ պարզ

17.Ի՞նչ եք կարծում, Ձեր ստացած գիտելիքները բավարա՞ր են արդյունավետ մասնագիտական գործունեության համար:

1) այո 2) ոչ (անցում 18-րդ հարցին) 3) դժվարանում եմ պատասխանել

18.
Ինչու_____

_____

Շնորհակալություն հարցերին պատասխանելու համար: